

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 Ֆր


ԱՐՏՍՍԱՆՍԱՆ

Երկու քիչ մեկ ծրարով
Տարեկան 14 Ֆր.
Վեցամսեայ 7 Ֆր.

ԱՍԵՐԻԱ

Տարեկան 2.60 Տօլ.
Վեցամսեայ 1.50 Տօլ.
ԿԱՆԽԻԿ

ԾԱՆՈՒՅԾԱՆ ՏՈՂԸ
20 ՅՆՔ.



Լ Ր Ա Ք Ր

Ա Ջ Գ Ա Յ Ե Ն Ե Ր Գ Ա Վ Ա Բ Ա Վ Ա Ն

ԿՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒՆ ԳՐԱԿԱՆ ԲԱՅԱՆՈՒՆ ԵՒ ԶԱՐԳԱԾ

Հ Ա Ս Ց Է

Redaction du Journal

«Ira vounk»

(Bulgarie) VARNA

Редация

на ВѢСТНИКЪ

«Иразникъ»

НАРНА

Գրադարանը կա չեն
բնակարան

ԻՐԱՆՈՒՆՔ ՄԱՄՈՒԼԸ

Թերթիս տպագրութեան հա-
մար մասնաւոր մը գնումը գիւրա-
ցնելու նպատակաւ երկու տար-
ուան բաժնեկիւն վճարեցին
Շուվրայի Ազգ. Ընթերցարանը
Տ. Սարգիս Բիւրտեան
Տ. Ս. Կիւլեգեան Եւա

ԲԻՉ ՍԸ ԶԳԱՏՈՒԹԻՒՆ

Ուղղակի 33 թիւին մէջ «Ը»
ստորագրութեամբ «Հայաստանը
խորագրով յոգնածին մէջ կըսէ.
«Եգիպտոսի երեք ուսուցիչը խնդ-
րին առթիւ ազատասիրական շար-
ժումներ ու թափօրներ տեղի
կուենան, որուն հայեր ալ կը
մասնակցին վերապահ գիւրքով
մը, և այսօր անոնք են դարձեալ
որ միայնակ կը մնան կառավա-
րութեան հետ դէմ յանդիման ու
անիրաւօրէն տասնրեօթը հայեր
կառնուին ոստիկանական հսկո-
ւութիւններու տակ, կարգաւ եր-
թալ թաց բանտերու մէջ ամիս-
ներով քաւելու համար յանցանք-
ները՝ զորս չեն գործեր»

Ինչո՞ւ արդեօք մեր գլխուն ե-
կած փորձութեանց պատճառը
յաճախ կը ջանանք օտարը ցոյց
տալ և յանցանքը օտարին վրայ
բեռնելով՝ կը դատապարտենք
ու կանխենք օտարը և այդպէ-
սով կը մխիթարուինք։ Բիչ մըն
ալ անկեղծ ըլլանք, ու փոխանակ
օտարին՝ մենք զմեզ քննադա-
տենք։ Այլսարհի ո՞ր անկիւնը՝
քիչ շատ հանրային բնութիւն
ունեցող խնդրոյ մէջ քիթերնիս
չենք խոթեր ու աչքի զարնե-
լու աստիճան խօլ ու յիմար ա-
բարքներով ու ետին առջին չի
մտածուած ծայրահեղութիւննե-
րով՝ փոխանակ համակրութեան
հակակրութիւն ու ատելութիւն
չենք հրաւիրեր մեր վրայ։ Այդ-
քան ամբոխին մէջ ուրիշ մէկը
չկ'որ որ Ռուս զինանշանին ցիւխ
կամ ապականութիւն նետէր, և
կամ թէ ի՞նչ փաստ պիտի ունե-
նայինք եթէ միթիւնկին մէջ հայ
մը չեղար Թրանսքէն լեզուով

Ռուս կառավարութեան դէմ ան-
վայել յարձակումներ ու լուտանք-
ներ չընէր։ Ի՞նչ չահեցանք բա-
ցի փաստէն... Յունա-Պուլկարա-
կան ընդհարումներուն ալ միեւ-
նոյնը չի պատահեցա՞ն միթէ
հոս աչք մտնալու, համակրու-
թիւն չահելու համար կընենք.
ընդհակառակը կսկսինք ատելի
դառնալ այսպէս, վասն զի միջազ-
գային դատ մը ունինք՝ որուն
չուրջը բարեկամները քիչ թըշ-
նամիները անհամար են, և ոչ
միայն մեր պաշտօնական հան-
գամանք ունեցող խնդրոյ մէջ,
այլ մեր անհատական կեանքին
մէջ իսկ որ և է ծայրահեղ արարք
մատի փաթեթոց կընեն մեր թըշ-
նամիները ևս այդպէսով ուղղա-
կի կաշխատին փաստը մեր ազ-
գային դատին և մենք առանց
ետին առջին մտածելու թէ՛ մեր
անհատական կեանքի մէջ, թէ՛
ազգային կամ յեղափոխական ու
և է գործի մէջ տեղի կուտանք
մեր թշնամիներուն, և ետքն ալ
կեղևնք Եւրոպացիներուն ու Ա-
մերիկացիներուն ինքզինքնիս Ա-
րեւելքի քաղաքակրթիչները,
քաղաքակրթութեան ռազմիրա-
ները կը ներկայացնենք. ո՞րք է
մեր քաղաքակրթութիւնը, ո՞րք է
մեր վարդապետը, երբ Ամե-
րիկացուց պէս քաղաքակրթաւ-
զի մը ստիկաններուն ու ժողո-
վորդին առջիւ Չայն Հայրենե-
եացի մը սեփականութեան խնդ-
րոյն առթիւ հայը հայուն դէմ
վայրենիներու յատուկ ատարան-
ներ կը պարզեն. ասդին եգիպ-
տոսի մէջ Բարթոլ բաշայի և կամ
թաղականութեան խնդրոյ մը
առթիւ եկեղեցին ամենամարտնոց
գինետունի մը պէս խաժամուժ
ամփոխին զաղբիւի հայհոյանք-
ներուն ու պէտեւերներու պէս ի-
րար բզըքտելուն թատերավայր
կընեն, անդին Բարիդի մէջ ժա-
մերգութեան պահուն վայրենա-
բար շրջապայած պնակներուն
վրայ կը յարձակին, դրամները կը
կողոպտեն և ֆրանսական ոստի-
կանութեան միջամտութեամբ հա-
զիւ կարելի կըլլայ կարգապա-
հութիւն հաստատել. նոյնպէս էլ-
միածնայ մէջ Սուքիաս Եպիսկո-
պոսի պէս՝ իր անկեղծ ազգասի-

րութեան համար արքայապետ ու
իր ծերութեան մէջ հազար նե-
ղութեանց կուրծք տուած եկե-
ղեցականի մը վրայ կը յարձա-
կին ու հազար տեսակ յիշողներէ
զատ վրան, գլուխը, մօրուքը դէմ-
քով թուրով ու խուսով կապա-
կանեն կուսակցական ետի մը հա-
մար։ Ասոնք են մեր քաղաքա-
կրթութեան յատկանիշները
Ամենէն սկեպտիկ Եւրոպացիին
անգամ, ոչ միայն իր եկեղեցւոյն
մէջ, այլ նոյն իսկ պուտոյական
մեհմանի մը մէջ ալ մտնէ ա-
մենայն քաղաքակրթութեամբ,
ամենայն պարկեշտութեամբ ու
յարգանք կը դիտէ կամ կը կե-
նայ, մինչդեռ մենք մեր անձ-
նական կիրքերուն, կուսակցական
եգիպտոսի ու ցեղային ամեն վրան
բաց ոտորնութիւններուն թատր
կընենք մեր եկեղեցիները ու
գարոցները, և գեռ եւրոպացուց
առջիւ կը պարծենանք թէ՛ քրիս-
տոնեայ ենք, քաղաքակրթութեամբ
ենք ենք... բայց կը կլլենք եւ-
րոպացիք... կը կարծենք թէ
չենք տեսներ, չենք հետեւիր մե-
զի անոնք մեր բարքերը մեզմէ
ազէկ կուսումնասիրեն, մեր գըլ-
խուն մազերը անգամ կը հաչ-
ուեն, ի՞նչ կը կարծենք...
Եւ այնքան խեղճ ենք որ ինք-
զինքնիս գաղափարական մարդիկ
ճանչցնելու համար, նոր վար-
դապետութեանց հետեւող ցոյց
տալու համար, սօցիալիստներու
հետ կը միանանք, անխառնակա-
նի հաղբի մառնենք, հայրենիքի
փրկութիւնը ձգած մեր ունեցած
խեղճուկ ուժն ալ օտարի գործին
յաջողութեան կը զոհենք, ու ի-
րար կը նախատենք (բաթրիթ)
ճշմարիտ հայ անուններով՝ մի-
միայն օտարին նմանելու համար։
Այո, օտարը շատ բան կընէ, և
ինչ որ կընէ և ինչ բան որ հը-
րապարակ կը նետէ, իր ցեղին
իր ժողովուրդին վիճակին, անոր
նիւթական ու բարոյական շահե-
րուն հետ հաշտեցնելով՝ անոնց
վրայ չափելով ձեւելով կընէ,
մինչդեռ մենք միմիայն նմանե-
լու, կապիկի պէս ընդօրինակելու
համար է որ կընենք.
Մեղացւոր յաջորդով

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ 16 փետր.
Մեծ եպարգոս Ֆէրիտ փա-
շային և դատական զործոց նա-
խարարին միջև հակառակութիւ-
նը զեռ. կը շարունակուի։ Սուր-
թանը քանի մը անգամ հաշտո-
ւելին հրամայեց, բայց Ապուր
Բահման փաշան սպառնացաւ հը-
րաժարականը տալ, և նախադա-
րաց ժողովին ներկայ չի գըտ-
նուէր յարդ։
* Անաւաթո զարծարանին եր-
կու տարի առաջ յանձնարարուած
պատերազմական նաւերը առջի
օր Պալոյ ջուրերը հասան։ Այս
նոր նաւերը դիտելու համար
Սուրթանը հրամայեց շրջան մը
ընել։ Այդ շրջանին նաւերը հա-
զիւ ժամը 12 մղոն ճամբայ կըտ-
րեցին։ Մինչդեռ ըստ պայմա-
նագրութեան պէտք էր ժամը
27 մղոն արագութիւն ունենա-
լին։ Նոյնպէս այդ նաւերուն
կազմածքին պայմանին անհա-
մապատասխան ըլլալը հաստա-
տեցաւ։ Տեղեկութիւն ստացած
ենք թէ նաւագործարանին հետ
գովիսիօն անունին տակ մեծ կա-
շառքներ սակարկած են Սուր-
թանին երկրորդ քարտուղար
Իզզէթ փաշան և ուրիշներ։ Առա-
ջինը լոկ 80000 լիրանոց շոգե-
նաւ մը շինել կուտայ իրեն հա-
մար նոյն գործարանին։
* Սուրթանը իր չորրորդ ու-
ղին Պարհանէտտին էֆէնտին
գահաժառանգ հաշակելու հա-
մար օտար վեհապետի մը քանի
մը միլիոն լիրա խոստացեր է։
Սուրթանը հրամայած էր մեծ եջ
պարգոսին որ այդ հաշակումը
պաշտօնապէս հրատարակէ. բայց
Ֆէրիտ փաշան պատասխանած է
թէ այդ ահագին գործ մըն է,
զոր յաջողցնելու համար հարկ է
որ նախորդ եպարգոսներուն և
նախարարներուն ալ հաճութիւնը
ստացուի։ Այս պատասխանը խե-
ղացի խորհուրդ մը նկատուելով,
Քիւչիկ Սայիտ փաշային և ԲՁ-
միւռնիոյ կուսակալ Բեամիլ փա-
շային կը դիմուի։ Սայիտին
տուած պատասխանը յայտ-

նի չէ, բայց Բեամիլ փաշան գը-
րաւորապէս կը պատասխանէ թէ
«այս գործին երբէք չեմ կրնար
համաձայնիլ. որովհետեւ նախ եւ-
րոպացիք չեն յօժարիր երկրորդ
խնդիրը կրնայ մեծ արեւնահե-
ղութիւն առաջ բերիլ եթէ Պիւր-
հանէտտինը դահակալէ առաջ
գործի վրայ գտնուողները կըր-
կին նոյնը պիտի մնան, ինչ որ
ոչ երկիրէն և ոչ արտասահմա-
նէն կընդունուի մեծ խառնա-
շփոթութեան մը պատահումը
անխուսափելի է այդ պարագա-
յին» :

Բեամիլ փաշային այս պա-
տասխանէն Սուլթանը կը կատ-
զի սուտի ըստ իր սովորութեան
անուղղակի կերպով վրէժ լուծել
կը մտադրէ. Բանի մը օր յե-
տոյ Սուլթանը Բեամիլ փաշային
սա հեռագիրը կուտայ. «Որդիիդ
ընթացքը անհանդուրժելի եղած
է այլևս. բոլոր աւագակները և
ոճրագործները դիմադրութեան
իր տանը մէջ կը պահպանէ կոր
նահանգին բոլոր գործերը ոչ
թէ ձեր կողմէ այլ տղուդ կողմէ
կը վարուին կոր: Այս պատճա-
ռաւ ձեզ պաշտօնանկ կընեմ և
ձեր տեղը Դոնայի կուսակալը
կարգած եմ: Դուք ալ Բէօթահեա
բնակիլ պարտաւոր էք» :

Այս թէև Բեամիլ փաշայի որ-
դին Սաիտ պէյը ոճրագործնե-
րու և աւագակներու պարագլու-
խըն է, բայց չէ՞ որ դեռ քանի
մը ամիս առաջ նոյն Սուլթանը
զանի իրեն թիկնապահ կորգած
ըլլալէն զատ փաշայութեան աս-
տիճանի բարձրացուց և բարձր
նշաններով զարգարեց անոր
կուրծքը:

Բեամիլ փաշան իր կեանքէն
վախնալով, գիշեր ատեն անդ-
լիական հիւպատոսարանը ապա-
տանեցաւ, Պալատը անմիջապէս
հրամայեց հիւպատոսարանը զօր-
քով պաշարել. Դեսպանը Լօնտրա
հեռագրելուն վրայ, սա պատաս-

խանը երկտեղի ներկայացուց. «Ե-
թէ 24 ժամուան մէջ հիւպատո-
սարանի բոլորտիքէն զօրքը չը
քաշուի, Միջերկրականի անդ-
լիական նաւատորմիդը Զմիւռ-
նիան թնդանթի պիտի բռնէ» :
Ասոր վրայ Սուլթանը վայրկե-
նապէս զօրքը ետ քաշել կուտայ
և Բեամիլ փաշային կարտօնէ
ուղածին պէս Զմիւռնիոյ մէջ բը-
նակիլ. սակայն փաշան չը վստա-
հիր այլևս, ուստի անոր թա-
խանձանքին վրայ, Անգլիոյ դես-
պանը անձամբ Սուլթանին կը
ներկայանայ և յանուն Անգլիոյ
ապահովութիւն կը պահանջէ:
Սուլթանը կը պատահանէ. «Ես
կը խոստանամ կոր. Պոլիս թող
գայ, ուղածին պէս թող պրտը-
տի» : Բայց դեսպանը Սուլթանին
բերանացի խօսքին ալ չը վստա-
հելով, կուզէ գործին պաշտօնա-
կան հանգամանք տալ և կը պա-
հանջէ արտաքին գործոց նախա-
րարին ստորագրութիւնը. և այս-
պէս կը կարգադրուի եւ Բեա-
միլ փաշան ալ համարձակ Պոլիս
կուգայ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

(Շար. Ասխուր Խիւն և վերջ)

8. Նկատելով որ Գահիրէ գումար-
ուած այդ Ընդհ. Պատգամաւորական
Ժողովին ներկայ գտնուած չէ Երկ-
րէն ոչ մէկ գործիչ կամ ներկայացու-
ցիչ:

9. Նկատելով որ Գահիրէ Գումար-
ուած այդ Ընդհ. Պատգամաւորական
Ժողովին ներկայ եղող Կեդրոն. Վար-
չութեան անդամները, ինչպէս նաեւ
միացեալ հինգ կամ վեց պատգամաւոր
ները՝ հօգի մէկ կամ երկու բացառու-
թեամբ՝ գիտակցաբար թէ անգիտակ-
ցաբար՝ գործիք դարձած են Արգու-
եանին, եւ փոխանակ Կուսակցու-
թեան կեանքին հետ անպատիժ խա-
ղալ ժպրհող այդ ապրիտը ամբաս-
տանալներու նստարանին վրայ քա-
շելով զայն դատելու, լախներու պէս
անսր շուրջը բոլորուած եւ կամքին ու

քայքային հպատակած են ստրկո-
րէն :

10. Նկատելով որ Գահիրէ գումար-
ուած այդ Ընդհ. Պատգամաւորական
Ժողովը՝ իր իսկ արձանագրութենէն
դատելով՝ Կեդրոնական Վարչութեան
աւելի քան երեք տարի պաշտօնավա-
րութեան ընթացքին Ամերիկայի Վեր-
ջինական Երջանակէն յեղափոխական
գործի համար տրամադրուած մօտ 55000
տոլարի գումարին արգարացուցիչ ու
մանրամասն համարատուութիւնը չէ
առած :

11. Նկատելով որ Գահիրէ գումար-
ուած այդ Ընդհ. Պատգամաւորական
Ժողովը ոչ միայն նկատողութեան չէ
առած Ամերիկայի բողոքող Դասնա-
ճիւղերէն, ինչպէս նաեւ. Նահանգային
Վարչութեան Ատենապետ ընկեր Տօք-
ն. Մ. Գալուստեանէ եւ նոյն Վար-
չութեան անդամ ընկեր Գէորգ Տէր
Մաղաքեանէ իրեն ուղղուած բողո-
քագրերը, այլ Նահանգային Վարչու-
թեան միւս երկու անդամներուն՝ ըս-
տրուկ Մերկիերի ու Վարձկան Արամ
Ասքանազի՝ իրենց պաշտօնակիցներէն
գաղտնի յերկրած եւ ուղարկած խար-
դախ տեղեկագրին վրայ՝ մէկ գրչի
հարուածով՝ «լուծած» է Ուստի եւ
Պոսթոնի մասնաժողովներուն պէս Կու-
սակցութեանս եւ Յեղափոխական կեն-
սատու ուժեր:

12. Նկատելով որ Գահիրէ գումար-
ուած այդ Ընդհ. Պատգամաւորական
Ժողովը ոչ միայն ամենադուրս մտա-
նդութիւն իսկ ցոյց չէ տուած Ամե-
րիկայի շրջանակին մէջ ծնունդ առած
եւ յեղափոխական գործին ուղղակի
սպառնացող խնդիրները ու եւ ը բարեօք
կարգադրութեամբ մը լուծելու, այլ
կացութիւնը յուսահատական ու կոր-
ծանիչ դարձուցած է՝ չարիքին մեծա-
գոյն պատասխանատուներէն Ա. Ար-
զուեանը բացէ ի բաց մաքրել-արքել-
վերնտրելով, եւ անոր Մարգուկէսեան
մեղսակցին ճարճրկելով անընդունելի
մեղմացուցիչ պարագաներու ամբողջ
փութիւնը մը. մինչդեռ Կուսակցութենէն
հակիրճօրէն արտաքսած է չարք մը
կարեւոր ընկերներ, առանց պատճա-
ռաբանի իսկ յամենայն իր այդ վը-
ճիւղը :

13. Նկատելով, վերջապէս, որ Գա-
հիրէ գումարուած այդ Ընդհ. Պատգա-
մաւորական Ժողովը Կուսակցութեանս
մէջ քօնթօրի եւ վստահութեան միակ
երաշխաւորութիւնը ներկայացնող նը-
ուերագործուած օրէնքները փոխանակ

պահպանելու եւ ապահովելու, Կու-
սակցութեան կաղապարի ձեռնարկած
է, ան ալ արաստամանի մէջ. «զին-
ւորական» կամ «ստանապետական»
զուեղտակոչեալ այնպիսի սխառութիւն
վրայ որ ոչ մէկ բանի պիտի ծառայէր,
եթէ ոչ շարքերու գիտակցութիւնը
խեղդելու, զանոնք ստրկացնելու եւ
պատասխանատուութեան ու վերահս-
կողութեան ամէն միջոց չքացնելու :
Այս բոլոր նկատուածներով՝ Ամերի-
կայի Վեր. Նշակեան Երջանակի 25րդ
Պատգամաւորական Ժողովը՝ միահա-
մուռ որոշմամբ՝ կուգայ յայտարարել
հանուր հայութեան թէ՛

1. Կուսակցութենէն իսպառ ար-
տաքսուած են՝ Ա. Արզուեան, Ղեւոնդ
վրդ. Մարգուկէսեան, Տօք. Ա. Տէր
Մարկոսեան իրր զեղծարար-գաւազիր
ներ, եւ Ս. Սուրէնեան իրր Կուսակ-
ցութեանս հանրը վախկոտութեան ու
վստահութեան գնով՝ իր իսկ ստորագրու-
թեամբ խոստովանած զեղծարար դա-
ւադիրներուն վաճառող մը: Արտաք-
սուած են նոյնպէս Կ. Բարգաման, եւ
Ս. Պատաճեան, Մ. Թուխմանեան եւ
Ա. Ասքանազ, իբրեւ զեղծարար դա-
ւադիրներուն ստրուկ ու վարձկան
գործիքներ, որոնց առաջին երկուքը
Գահիրէի Ընդհ. Պատգամաւորական
Ժողովի մէջ Երջանակս մատնեցին եւ
իրենց վերադարձին խուսափեցան Պատ-
գամաւորական Ժողովիս ներկայանալէ,
իսկ որոնց վերջին երկուքը՝ անօրա-
կելի վատութեամբ՝ գաւազիրներու
հաշտայն ընդունակ հանդիսացան ամե-
նէն սողուն ցածու թիւններուն. իսա-
բեցին մասնաճիւղերը, խարեցին իրենց
պաշտօնակիցները եւ անոնցմէ գաղտնի
խարդախուած տեղեկագիր մը Գահիրէ
ղրկելու լրտեսական լրբութիւնն իսկ
ուենեցան :

2. Մենք երբէք չենք ճանչնար անց-
եալ 1906 Հոկտեմբերին՝ Վերակազմ-
եալ Նշակեան Կուսակցութեան առեւ-
նով՝ Գահիրէ գումարուած Ընդհ. Պատ-
գամաւորական Ժողովը, զոր Գիւլիլի-
ՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ կը հռչակենք, եւ ու-
րուն բոլոր որոշումները, — այն է
«ստանապետական» դրութիւն, նահան-
գային վարչութիւններու լուծում, չըր-
ջանակային պատգամաւորական Ժո-
ղովներու դադարում, յանցաւորին ար-
գարացում, անմեղներու արտաքսում,
կարեւոր մասնաճիւղերու լուծում,
եւայլն—իսպառ անընդունելի են մեզի
եւ մեր պատկանիլ դաւանած Վերակ.
Նշակեան Կուսակցութեան :

Ա. ԵՐԵՄԱՆԵԱՆ

56

ԱԿԱԶԱԿԱՊԵՏԸ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ



ՎՐԵԺԸ

(Շար. Նախորդ թիւէն)

Աւագակապետը մեկդի գնելով այն
գրութիւնն ու պահարանն, աճապա-
րեց միւսն ալ կարդալու :

«Մեծանուն Վարպետ,

«Երեկի մատնութիւնը չէի յայտ-
նած թէ ինչ պատճառներէ ծնունդ
առած էր: Այս բացատրեմ. դաւաճանը
սուրհանդակէն լսած ըլլալով որ կա-
ռավարութիւնը հարիւր օսմանեան ու-
կի խոստացած էր այն մարդուն որ
կարենար գտնել մեր զինակիր խում-

բին ապաստանարանը, յանձն կառնէ
այդ վատութիւնը գործել ու կ'ըրկի
գեղիններու տէր դռնալ: Ասիկա ի-
մացուեցաւ մեր երկրորդ սուրհանդա-
կին կատարած լուրջ քննութենէն :

«Միեւնոյն տոնն, տեղեկացած ենք
որ դաւաճանը բանտարկուած է :

«Բոլոր սրտով խումբս կը բարեւէ
խմբապետ՝ Վարդով :

Այս երկու գրութիւնները կարդալէ
ետքը՝ մեքենաբար ոտքի ելաւ Աւա-
գակապետն ու մեկնեցաւ :

Խաւարը թանձր է դուրս: Ամեն
կողմ խոր լուութիւն տրեւած էր :

— Անթա՛ծ... միմիջեց Աւագակա-
պետն ինքնիրեն. հարիւր ոսկիի հա-
մար խիղճը սեւցուցիր, անանկ չէ...
խիստ լաւ. այդ վայելքը պէտք է ա-
րեւնով, արցունքով ներկուած հայ-
րենիքի հողին վրայ չը կատարես...
անո՛նք, այդ ոսկիի վերածուած նիւ-
թերը, գիտցիր որ մեր ճակտի քըր-
տինքներէն կազմուած են... Ու
դու՛ն, հրէջի մը ծնունդ, զոսն ինչ
բրտով, ինչ խղճով կուգես եղբորդ

արեան զինը կոկորդէզ վար լեղներ... :

Մենախօսութիւնը շարունակելով՝
Հայկապետը հասաւ ու Լուսիայի ա-
պաստանած բնակարանը մտաւ :

Լուսիա դիտեց հօր խողվայոյղ կեր-
պարանքն ու հարցուց.

— Ինչ պատահեցաւ, հայր :

— Մատնութիւն մը կայ, աղջիկս,
պատասխանեց Աւագակապետը՝ որ
գաղտնի պահն չուզեց եղելութիւնը :

— Որո՞ւ դեմ, հայր :

— Մեր զինակիր խումբին դէմ :

— Ինչպէ՞ս կ'ըլլայ այդ :

— Վատի մը ձեռքով :

— Մենե՞ք է այդ վատը :

— Այո՛ :

— Խումբին մէջէն :

— Ճշմարիտ է :

— Ո՞ր, յետո՞յ... :

— Բարեբաղտաբար շուտով իմաց-
ուած է :

— Ո՛ր եւ է վտանգի մը չէ հանդի-
պած :

— Ամենեւեմ միայն թէ՛ շատ հե-
ռացած են :

— Դէպի ո՞ր կողմ :

— Այս անգամ դէպի պարսկաստա-
նի սահմանները գացած են... :

— Հապա դաւաճանն ինչ եղած է :

— Կերեւի թէ մատնութիւնն՝ որ հա-
րիւր ոսկիի պարգեւով մը պիտի վա-
ճատուէր, օգտակար արդիւնք մը չու-
նենալով, կառավարիչը բարկացած է ու
բանտարկել տուած է զինքը :

— Օ՛ր ըլլայ... ըսելէ թէ՛ Աստու-
ծոյ պատիժը շուտով հասած է իր գըլ-
խուն : Բայց դուն ինչու համար տըժ-
գունած ես, հայր :

— Լուսիա՛, զիտցիր որ չափազանց
դռն եղաւ ինծի այս մատնութիւնն,
թողիկեաւ այսքան ատեն ներքին թժ
մը տուեցած չէի :

— Հոգ չէ. հայր, թող այս ալ կա-
տարուի... չէ որ Աստուած կառաջ-
նորդէ մեր քայլերը, ինչու համար
յուսահատինք :

Աւագակապետը տրամալի բայց մի-
եւնոյն ատեն խանդաղատանքով մը լի
ժպիտը չը կրցաւ զսպել իր չթթունք-
ներու վրայէն, որոնք հոգեւոր թըր-

3. Մենք չենք ճանչնար Վերակազմ. Հնչակեան Կուսակցութեան անունով ներկայիս գոյութիւն ունեցող ո եւ է կեդրոնական վարչութիւն եւ կզգուշացնենք հայ հասարակութիւնը, ինչպէս նաեւ հայ յեղափոխական կազմակերպութիւնները, այդ անունով ներկայանալ յաւակնող ո եւ է մարմին կամ անհատի դէմ:

4. Սկսեցինք Վեր. Հնչակեան Շրջանակի 25րդ Պատգամաւորական ժողովուրդական ժողովուրդական կանոնաւոր նախագային վարչութիւնը. որուն յանձնած է խնամքը Վեր. Հնչակեան քոյր շրջանակներուն հետ յարաբերութեան մտնելու եւ Կուսակցութեանս օրինաւոր Ընդհ. Պատգամաւորական ժողովի գումարման համար հարկ եղած միջոցները ձեռք առնելու:

5. Պատգամաւորական ժողովս խանդավառութեամբ կողջունէ վերջերս Մուրադի եւ Անդրանիկի միութեան ու համերաշխութեան համար ըրած կոչերը եւ Ամերիկայի Վեր. Հնչակեան Շրջանակին կողմէն իրաւասութիւն տրուած է նորընտիր նախագային վարչութեան յեղափոխական մարզեր տարրերու մէջ հարգատ օ անքակտելի միութեան մը իրականացումին ամէն կերպով նպաստելու:

Ներկայ յայտարարութեամբ մեր գիրքը վճռաբար եւ անդառնալիօրէն ճշգրիտ է ետք. անհրաժեշտ կը սեպենք աւելցնել թէ՛ մենք խորապէս գիտակից հայրենի ճգնաժամին, եւ ազգային ներկայ պահանջներու տարաձոր մը տանողութեամբ համակուած՝ նպատակ չունինք բնաւ մեր ճիգն ու կողովը վատնելու Կուսակցական կամ հատուածական նորանոր գայթակղութիւններու մէջ, այլ՝ զուարթութեամբ ու ոճրապարտները թողլով իրենց ահաւոր ճակատագրին՝ մենք ուխտորոշած ենք, աւելի քան երբէք ջերմեռանդօրէն հաւատարիմ Վեր. Հնչակեան ծրագրին ու կազմակերպական նուիրագործում օրէնքներուն, եւ աւելի քան երբէք անվատ ու գոտկապնուած հաւատքով, շարունակել մեր բոլորապէս զոհարարութիւնը Հայ Յեղափոխական Գործին, որուն յարաճուն հզօրացման եւ գերագոյն պսակումին համար պիտի գիտնանք՝ մինչեւ վերջին կաթիլը՝ չխնայել երբէք մեր ճակտին քրտինքը եւ մեր երակներուն արիւնը:

Վեր. Հնչ. Շրջակայի
25րդ ՊԱՏՄ. ԺՈՂՈՎ

ՕՍՍԱՆ. ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ



ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ

(Շար. Ասխուր Թիւհն)

Յօդ. 27. — Վեհափառ Սուլթանը Մեծ Եպարգոսի եւ Շէյխ-Իւլ-Իսլամի պաշտօնները կը յանձնէ իր բարձր վրատահութեան արժանի դարձած անձերուն Միւս նախարարները կանոնաւոր իրաւունքով:

Յօդ. 28. — Նախարարներու խորհուրդը կը գումարուի Մեծ-Եպարգոսին նախագահութեամբ: Նախարարներու խորհուրդին իրաւասութեան սահմանին մէջ են պետութեան բոլոր կարեւոր գործերը, ներքին եւ արտաքին: Իր այն որոշումները, որոնք Վեհափառ Սուլթանին հաւանութեանը կը ներկայացուին, կայսերական իրաւունքով կը գործադրուին:

Յօդ. 29. — Իւրաքանչիւր նախարար իր իրաւասութեան սահմանին մէջ իր պաշտօնին վերաբերեալ գործերը կը կարգադրէ, իսկ իր սահմանէն դուրս գտնուող գործերուն համար Մեծ-Եպարգոսին խորհուրդը կը հարցնէ: Մեծ-Եպարգոսը գործադրել կուտայ զանազան նախարարներու իրեն ուղղած տեղեկագրերը, եթէ պէտք ըլլայ Նախարարներու խորհուրդին եւ յետոյ կայսերական հաճութեան ներկայացրելով զանոնք, եւ կա՛ն եթէ հարկ չէ, ինքն անձամբ որոշելով կամ միայն Վեհափառ Սուլթանին հաւանութեանը ենթարկելով: Մասնաւոր կանոնադրութեամբ մը պիտի որոշուի այդ գործերու տեսակն ու չափը:

Յօդ. 30. — Նախարարները պատասխանատու են իրենց վարչութեան վերաբերեալ խնդիրներուն եւ գործերուն համար:

Յօդ. 31. — Եթէ Պատգամաւորական ժողովի անդամներէն մէկը կամ շատերը ուզեն նախարարի մը դէմ բողոքել անոր պատասխանատուութեան պատճառով եւ այնպիսի գործերու առիթով՝ զորս ժողովը իրաւունք ունի քննելու, բողոքագրերը ժողովի նախագահին պիտի տրուի, որ զայն կը ըզրկէ, երեք օրուան մէջ, այն դիւանը, որ ժողովի ներքին կանոնադրութեան համաձայն, պաշտօն ունի բողոքը քննելու եւ որոշելու: Եթէ հարկ կ'ա՛յ արդեօք զայն ներկայացնելու ժողովին վիճարանութեան: Դիւանին որոշումը

կը կատարուի քուէներու առաւելութեամբ, մեղադրուող նախարարին բացարձակութիւններն ստանալէ յետոյ: Եթէ դիւանը յարմար գտնէ բողոքը Պատգամաւորական ժողովին ներկայացնել, այդ որոշումը հաստատող տեղեկագրերը հրապարակային նիստի մը մէջ կը կարգադրուի եւ ժողովը՝ մեղադրուած նախարարին որ պիտի հրաւիրուի ներկայ գտնուել եւ կամ անոր փոխանորդին բացատրութիւնները լրսեցնէ յետոյ, ներկայ գտնուող պատգամաւորներու երկու երրորդին բացարձակ մեծամասնութեամբ կը քուէարկէ տեղեկագրին եզրակացութիւնները: Եթէ այդ եզրակացութիւններն ընդունին, մեղադրուող նախարարը դատի ենթարկուող ուղերձ մը կը զրկուի Մեծ-Եպարգոսին որ Վեհափառ Սուլթանին հաւանութեան կը ներկայացնէ զայն եւ կայսերական իրաւունքով Բարձրագոյն Ատեանի՝ առջեւ կեղծ նախարար:

Յօդ. 32. — Մասնաւոր օրէնք մը պիտի որոշէ նախարարներու գաղտնի եղանակը:

Յօդ. 33. — Նախարարներու եւ անհատներու միջեւ ամենեւին տարբերութիւն չկայ այն դատերու նկատմամբ, որոնք անոնց պաշտօնէն դուրսն: Այդ կարգի դատերը կը տեսնուին սովորական դատարաններու ձեռքով:

Յօդ. 34. — Այն նախարարը, որուն դատի ենթարկուելը որոշած է բարձրագոյն Ատեանի ամբաստանիչ ճիւղէն պաշտօնէն կը հեռացուի, մինչեւ որ իրեն դէմ եղած մեղադրանքներէն անպարտ հռչակուի:

Յօդ. 35. — Եթէ պատգամաւորական ժողովը պատճառաբանուած քուէով մը մերժէ օրինագիծ մը, որուն դէմ են նախարարները, Վեհ. Սուլթանն իր վեհապետական իրաւունքով նախարարներու փոփոխութիւնը կամ ժողովին արձակումը կը հրաւիրէ, օրէնքի որոշած պայմանաթմբին մէջ պատգամաւորական նոր ընտրութիւններ կատարուելու պայմանաւ:

Յօդ. 36. — Ստիպողական պարագաներու մէջ եթէ Ընդհանուր ժողով գումարուած չէ, նախարարութիւնը կրնայ միջոցներ ձեռք առնել պետութիւնը վտանգէ մը պահպանելու կամ ընտանաւոր անգործութիւնը ապահովելու համար: Այդ միջոցները կայսերական իրաւունքով վաւերացուելէ յետոյ, առժամանակեայ կիրպով օրէնքի ուժ ունին, եթէ Սահմանադրութեան հակա-

ռակ չեն: Յիշեալ միջոցները պէտք է Ընդհանուր ժողովի ներկայացուին անմիջապէս, երբ որ գումարուի: Յօդ. 37. — Ամեն նախարար իրաւունք ունի ձեռակոյտին (սենատ) եւ Պատգամաւորական ժողովի ներկայ գտնուելու կամ իր պաշտօնատան բարձրագոյն պաշտօնեաներէն մէկը փոխանորդաբար խրկելու: Իրաւունք ունի նաեւ խօսք ուղղող ունէ պատգամաւորէ առաջ լսուելու:

Յօդ. 38. — Երբ քուէներու առաւելութեամբ տրուած որոշումի մը համեմատ նախարար մը կը հրաւիրուի Պատգամաւորական ժողովին առջեւ բացատրութիւններ տալու, նախարարը պարտաւոր է իրեն ուղղուած հարցման պատասխանել անձամբ կամ իր պաշտօնատան բարձրագոյն պաշտօնեաներէն մէկուն միջոցով: Իրաւունք ունի սակայն իր պատասխանը յետաձգելու, իր վրայ առնելով անոր պատասխանատուութիւնը:

(Շարունակելի)

ՄԻԱՅՈՒՄ

Դադաքիս Հայկական Ընթերցարանի անդամները ժողովի կը հրաւիրուին յառաջիկայ ուրբաթ իրիկուն ժամը 9ին, դաշնակցականներու Բաբկէն Սիւնի Ընթերցարանին հետ միացման որոշում տալու համար:

Այս գնահատելի խորհուրդը անկեղծօրէն իրականացնելու համար, պէտք է Դաշնակցական ու Հնչակեան որակումներուն բնաւ տեղ չը տալ այլեւս միացեալ Ընթերցարանի արձանագրութիւններուն մէջ: Արդէն Բաբկէն Սիւնի Ընթերցարանի գոյքերուն կարեւորագոյն մասը նախկին Սիւսակեան ազգ. Ընթերցարանին սեփականութիւնն էր. ուստի այժմ բոլորը պէտք է ազգային սեփականութիւն արձանագրել քայքայման պարագային տեղւոյս հայ եկեղեցւոյ մնալու պայմանաւ:



Թուումն ու քաղցրութիւնը կարտայայտէին: Իովանդակ կեանքին մէջ, որ արկածալից ու վտանգաւոր եղած էր, իրեն համար միմիայն մէկը կը մնար, իրեն համար էակ մը կապէր, որուն մէկ ժպիտը, մէկ չրառը, մէկ խօսքը բաւական կըլլար կապել զինքը աշխարհին... Այդ էակը Լուսինան էր... այդ էակը իր պաշտելի աղջիկն էր, երբ ան խօսէր, վայրկեանապէս կը մոռնար տոռապանքներու ամենէն աղետաւորը... Շատ անգամ խորին դառնութեամբ ըսած էր.

— Ո՛հ, ինձ աղջիկս, տարաբաղդ աղջիկս, դուն ալ ի՞նչ տեսար... դուն ալ ի՞նչ արկածալից կեանքի մը կապուեցար... Աւաղ, աչքդ բացիւ չը բացիւ, արցունքներդ չը դադրեցան, հառապանքներդ չը մտրեցան ու երկիւղալի կեանքդ զրկանքներէ չազատեցաւ: Վայրենաբարոյ կառավարութեան մը բանտերէն ինչուան թիարանի դուռը թափառեցար... հայրենիքէդ դուրս, օտարութեան մէջ, տարիներով ապրեցար... Թե՛ս այս եղաւ քու կեանքդ:

Բայց արիասիրտ Լուսինա կը պատասխանէր.

— Հայր, չէ՞ որ ամեն մարդ իր ճկատագրին զոհն է, ի՞նչու համար կը գանգատուիք... Ո՛հ մեր աշխարհին մէջ ո՞վ էր որ արցունքներ կը թափէր, ով է որ աչքը ժպիտներու մէջ կը բռնայ, ով է որ իր ճակտի քրտինքը կը վայելէ, մէկ խօսքով՝ ով է որ երջանկութիւնը ճանչցած է: Մէկը չը կայ: Ան որ կ'զգայ ու կը տեսնէ իր վերքը, բնաւ հանգիստ չը կրնար ըլլալ: 25՝, հայր, չէ... հաւատա՛ որ աղջիկդ այնքան դժբաղդ ու տարաբաղդ մէկը չէ... ինչուա՞ն ու տարաբաղդ անոնք են որ չեն կրնար անոնց վրէժը յուծել ու կը լլկուին գազաններու ճանկին մէջ...:

Մեծ մարդը կը յիշար, կը լեցուէր ու իրեն անանկ կուգար որ հրէշտակի գոյութեանը մէջ մարմնաւորուած չմնալ էակ մընէր Լուսինա զոր Աստուած պարգեւած էր զիփփանք մը ըլլալու: Երբէք, երբէք օր մը եղած չէր որ գանգատէր իր վիճակէն: Ու ար-

ցունքը փոխուած էր իր աչքերու մէջ բոցալաւա վրէժի մը՝ ՎԱՆԱԿԱՆԻ շիրմին վրայ ուխտը կատարած օրէնք...

— Հայր, հայր, կրկնած էր Լուսինա ամեն ատեն. չէ՞ որ մեր պաշտելի հայրենիքը տեսանք, չէ՞ որ Վանականի շիրմի մը արեւը առջեւն է, աւելիք զատ ի՞նչ երանութեան կրնայ հասնիլ: Մանաւանդ. Աստուած կառայնորդէ մեզ՝

Աւազակապետը ջանաց փարատել տրտութիւնը, որ ստուերի մը պէս ծածկւած էր կերպարանքը, հետեւաբար խօսքը փոխեց ու տարբեր բաներու վրայ խօսեցաւ:

Աստուան դէմ, սովորականին համաձայն, կամաց մը դուրս ելաւ եւ ուղղակի Լէդք կոչուած գիւղը գնաց, որ քաղաքէն կէս ժամ հեռավորութիւն ունէր:

Երբ զատիվներ հասաւ, պահ մը կանգ առաւ ու գիւղին առջեւը բարձրացած վիթխարի ապառաժի մը նայեցաւ:

— Սա գիւղն ալ ի՞նչ պատմական յիշատակներ ունի, մրմնջեց Արազա-

կապետը: Ժամանակ մը, դարերով անգին, Ասորեստանցի մեծ թագուհին աստուածները կը բնակէին... իսկ այսօր աննշան ու ողբալի տեսարաններով գիւղ մը դարձած է: Մանաւանդ սա վիթխարի ապառաժը լեզու ունեւնալու էր որ հպարտութեամբ ըսէր թէ ինչե՛ր տեսած է, ի՞նչ ուրախութիւններ կատարած են եղեր իր շուրջը...

Ու կամաց կամաց գիւղը մտաւ, այրուած փողոցները տիղմերու մէջ կը մնային:

Գիւղին արեւելեան կողմը խարխուղ վիճակով բնակարաններ կային: Աւազակապետը յառաջացաւ այդ փողոցը ու ցանկապատէ մը անցաւ պարտէզ մը, որուն մէկ անկիւնը չէնք մը կար ախորներու նմանող:

— Անպատճառ սա չէնքն ըլլալու է... մրմնջեց Աւազակապետը ինքնիրեն որովհետեւ Միւր արիւթը ըսած պարտէզը ճիշտ այս պարտէզն է:

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻՒՐԿԻԱ

Սթանպոլտա Ղալաթա սերա-
յընտաքի Մէքթէպի Սուլթանի-
յէնին եանուպ քիւլ օլտըզընը
տիւնքի թէլէկրաֆ պիւտիւրտի:

— Բարիզ էլչիսի Միւնիսթր քա-
շա Սթանպոլտան հարէթէթլէ
Սուլթանտան պիւր մէքթուպ սըրպ
գըրալընա կէթիւրսիլ տիր:

— «Իզտամ» կազմէթասընտա
սգունմուշ տըր: «Պիւր շախս իս-
մինէ հմադ գալտ օլունմուշ օ-
լունպտէ, անըն վարիսիզ էօլմէ-
սինտէն սոնրա» օ էմադ խալթթ-
խանէլէրին օլմասը թէպէլիւն
իտէր իտէ՝ նէ եօլտա մուալէլէ
իթմէլիլի տէլիւ «իւլիւ օլուն-
մասը իւզէրինէ ճէլմապ վէրիւ-
միլ տիր քի՝ օ կիւլի միւլքէթ
մահլիւլ ատտ օլունմալը վէ օնա
կէօրէ մուալէլէ իսկիւլիլի»

Շու հալտէ պիզիմ թիւրքիս
տաքի քիլիսէ վէ մէքթէպ միւլք-
լէրինին էքթէլիսի մէհնուլ շախս-
լար իսմինէ եազըլմըլ օլմալէ-
մահլիւլ ատտ օլունմալը վէ
հիւքիւմէթէ գալաճադ տըր: Պու
հապըլլըլա Բաթրիկ հանէ թէ-
հէմիւլ իտէճէ՝ք մի Օրմանեա-
նըն շու կիւնլէրտէ իշլըրլա վէ
Պապը Ալիյէ գօշմասը պու մէսէ-
լէտէն տօլայը օլմալը զանն իտէ-
րիլ:

— Սթանպոլտա պիւր իթալիա
պանգասը թէէսիս օլունիյօր: 3
միլիոն ֆրանկ սէրմայէ վազ օ-
լունմուշ տըր:

— Սամա ատասընտա զուհուրա
կէլմիլ օլան գարըլըզլըլտան
տօլայը 8 քիլի թահթը մուհա-
քէմէյէ տըլնաճազլար: Պու սէ-
պէպլէ ատտա աէնի իսթի-
լալ պաշլամըլ:

— Էրզըրում վիլայէթի տախի-
լինտէ Բագարիճ քէօյիւն Էրմէ-
նիլէրի Բիւրտլէրին թէզլիգին-
տէն տճիզ գալարադ թէպտիլի
մէզհէպ իթմէլէ գատար վէրմիլ-
լէր իտէտէ, Էրզըրումտան մէմուր-
լար վէ Բագաս կիտուպ Բիւրտ-
լէրի վէ Էրմէնիլէրի պտըլըլտը-
մըլլար: պու սուրէթլէ թէպտիլի
մէզհէպ իթմէնին էօնիւ ալըն-
մըլ: Փագաթ Բիւրտլէր տիկէր
քէօյլէլտէ զատաարըլա տէվամ
իթմէլտէն տուր օլմայօրլար: զի-
րա «սայէսի շահանէտէն» Համի-
տիլէ սիւվարիսի պուլընտըլա-
րընտան քիմսէտէն գօրգուլարը
եօգ տըր: Հիւքիւմէթ շախսի վէ
հայվանաթ վէրկիլէրինտէն վազ
կէչմէմիլ տիր Էրմէնի ֆագիւր
քէօյլիւլէր հիւքիւմէթին ալըր
ալըր վէրկիլէրինտէն մատա
Բիւրտլէրին իսթէտիլէրինի
վէրմէկէ վէ թահսիտարլարը վէ
ասքէրլէրի պէսլէմէկէ մէհպուր
պուլընիյօր: Պու ալըրլըզլարա
վէ ռէնհիտէլէրէ թէհէմիւլ իտէ
մէյէն քէօյլիւլէր գօնսօլսանէ:

լէրէ միւրաճաթլէ անլէրտէն
հիմայէ օլընմադ իմիտի իլէ
թէպտիլի մէզհէպ իթմէլէ իո-
թէմիլ, ինկիլիզ վէ Պրանսլըզ օն-
սօլսլարը գապուլ իթմէմիլլէր:
Րուս գօնսօլսը իլէ միւլէքէրէ
իտէյօրլար: Վալի պու հարաքէ-
թէ քահպէր օլունլարըն պապը-
լարընը իսթինթադ իթտիքաէն
սանրա հապս իթտի:

— Գաթէրինա գազասընտա
վուգու պուլան ճիւնայէթին թահ-
գիլինտէն անլաշլուր քի՝ Եու-
նան չափուշը Մաթապսըն գօ-
մանտաթ ալթընտա պուլընան
Էէտի րուլար տըր 15 պուլիսը
քէօմիւրճիլէրի Էօլիւրէնլէր:
տիկէր 3 քիլի տախի եարալան-
միլ վէ 6 քիլի գաշլըլար: Րուս
չէթասընա գըլափուզ օլան 6 րուս
քէօյլիլէր թուլթուլտու: Ձէթա
Եանիլ կէօլիւնէ տօղրու կիթմիլլէ,
օրատա տիկէր չէթալար իլէ պիւր-
լէչմէլէ իլիւն:

Սքիւպ, Պիւրինա, Գասթօրիս
վէ Սարիչապա գազալարընտա
գափկալար վուգու պուլտըլար:
Պօզէյտէ պիւր րուս չէթասը պիւր
պուլկար էվիլի եադտը վէ 3 քի-
լի Էօլիւրտիւ 2 քիլի եարէլէտէ:

ՏԱԽԻԼԻԷ

Միսիստը Բէքթուլըն գաթիլ

Սօպրանիյէ մէհլիսինտէն սօն-
րա՝ վիւքէլա ռէյիսի Մ. Բէթթըլ
թիճարէթ վէ զըրաթ նալըրը
Մ. Կէնատիէվ, հարպիյէ նալըրը
Սալօֆ վէ մալիէ նալըրը Բայա-
թըլ սաաթ 4 պուլուր րատտէլէ-
րինտէ Պօրիսըլ պաղչէսինէ կէզ-
մէյէ կիթմիլլէր իտի: Կէրի աէօն-
տիւքէրի էսնատէ Բօյէք պիւրա
հանէսինէ վէ քէօքիւլէ եադըն
պիւր գաշ կէնճլէր՝ գաթըլարընա
չըգարլար: պուլնարտան պիւրի
պիւր ռէվօլլէր չըգարաթա՝ ա-
թէլ իտէր Բէթթըլ գաշմադ թէ-
լաշընտա իքէն սրթընտան վու-
րուլուր, Կէնատիէվ տախի սօլ է-
լինտէն եարէլէնի: Օ սանիյէտէ
օրատան կէչմէլտէ օլան պիւր չա-
վուշ նալըրլարա սէլամա տուր-
մուշ օլուպ ռէվօլլէրին րաթլա-
մասըն կէօրմէսինտէ, գըլըճընը
չէքուպ գաթիլի մէնն իթմէլէ
համլասընտա իքէն Բէթթըլ վու-
րուլուր հալտէ անըն գօլլարը-
նա աթըլըր, վէ «աման տիկէր
մինիսթէրլէրի մուհաֆաղա իթ»
տէր: Պուլարըն արգալարընտան
պիւր աղ իրագտան Էրիւրմէլտէ
օլան ժանտարմ սիւրհ սէսինտէն
գօշարադ գաթիլի թուլթար: Բէթ-
թըլ իքի սանիյէտէն էօլիւր:

Գաթիլ Ալէքսանտըր Բէթթըլ
իսթինտէ պիւր կէնճ օլուպ: 2ը-
րաթ պանգասընտա մէմուլ ի-
քէն եադընտա արզ օլունմուշ
ըտըր: Սօսիալիսթ-Տէմօկրատ ֆըր-
գասընա մէնսուպ օլտըլընը տա-
խի պիւտիլիյօր:

Վիւքէլա ռէյիսի Բէթթըլըն

տէր հալ էօլմէսինէ պագարադ,
գուրչուն ագ ճիլէրինի տէլիլ
տէյօրլար էէօլիւ քէնտի խանէ-
սինէ նագլ օլունտըր: Մէպուլար
վէ սայիւր պիւր չօգ գաթլար, նէզ-
տինէ կիթտիլէր: Բրէ. սէ վէ էլ-
չիլէրէ թէլէկրաֆլար վէրիլտի:
— Էլէկընա Բօշրա կազմէթասընը
մուհարրիլի Սուլթանը «գանլը
գաթիլ» թէօմիլէ իթտիկի իլիւն
իսթիտաթ իւզէրինէ, 15 կիւն
մահպուսիլլէթէ վէ 100 ֆրանկ
ճէզայի նագթիլլէյէ մահքիւմ ի
տիլտի:

Պու միւնտօիպէթլէ, մուհար-
րիւր Մ. Բատէվ պէհպագին թաա-
նալընը պէլանլէ տէյօրքի՝ ու-
մուս պիւնեանըն գանտաթ հա-
մըլ իթտիկի թէվարիլի զիքը ու
թէքրար իթմէլէ եալընը Պուլ-
կարիտա եասադ ըմրշ: պիլ ու-
նուլթմալը ըմրշը 300.000 էր-
մէհլէրին գաթլ օլընմալարընը:
Մաքէթինիտա քէօյլէրին վէ
գասապալարըն ալէֆլէր իլիտէ
Եանտըրգըրընը վէ հէսապըր
պիլիլէնեալարըն թիւրք մահ-
պուլարընտա չիւրիւմէլէրինի:

Բարիզտէ Մ. Բիէն Գիյառ տա-
խի Սուլթանա ալիս սըֆաթը
վէրմիլ օլմադընտան նաշի Միւ-
նիւր բաշա տալա ալմըլ ըտը:
Փագաթ ռէսմի «Սարի տէֆլէ-
րինտէ» միւնտէրիճ ֆրանսըլ էլ-
չիսինին րաթթընտան Էրմէնի
գրիլընը հագգընտա շու իպա-
րէի «Օռուստա իգթիպաս էյլէ-
տի» «ալտըրըմըլ պիւլիւն մա-
լիւմաթլարլէ գաթիլէն աշիքեար
օլմուշ տըր քի՝ Սուլթան քէն-
տիսի գաթիլլէրին էլլէրինէ սի-
լահ վէրմիլ տիր»:

Իշպու ռէսմի ըսպաթ իւզէրինէ
Սուլթանըն Բարիզ էլչիսի տա-
վասընտան վազ կէչմիլ իտի:

Շիմոի Պուլիարիտա ալէնէն
իւմալը խըրսըլա խըրսըլ վէ գա-
թիլէ գաթիլ տէյէն ճէզայա միւս-
թահադ օլիյօր: շու հալտէ խըր-
սըլլարա գաթիլլէրէ վէ ատէպ-
սիլլէրէ ճէսարէթ վէ սուհուլէթ
վէրիլմիլ օլիյօր:

ԲՈՒՍԻԱ

Տուսա Փետր. 20տէ ալըլտըր: Ձարըն
պիւր ուքալըր օղունտուգտան սօնրա
սօլ գօլ «Եաշապըն իմէրաթթ» պա-
ղըրը վէ ալըլաթը, մէքէզէ սօլ գօլ
սիւքիւտ գալտըլար վէ ըսըլաթըլար:
Րէյիս Մ. Կօլուպէվ մէպուլարա կէ-
պին վէրտիքտէն սօնրա քիւֆէսի իմ-
գալաթըլար: Տուսանըն ասըլ ռէյիսի
ինթիլապ իլիւն ռէյ աթըլտը վէ 356
սէսլէ Գաթէթլէրին գանտիտաթ Մ.
Կօլմիլ ինթիլապ օլունտու: մէքէզ
վէ սօլ գօլ միւլթէֆիլ պուլընտըլար:
Սաղ գօլըն գանտիտաթ իթիպաթըլ եա-
լընը 91 սէս ալտըր: Շու հալտէ մէ-
պուլարըն պէլտէ պիւրի եալընը հիւ-
քիւմթ թարաֆտարը օլուպ, տէօրտ
գըսմը գարլը տըր:

— Սալիլէ նալըրը իլը մէհլիստէ
1907 սէնէնին պիւտմէսինի մէյաւան
գօյտու: սէնէլիք մէսարիֆ 2471 մի-
լիոն 684.872 րուպիլլէ չըգալօր:
վէ 380 միլիոն րուպիլ իսթիգրադ թէք-
լիֆ իտէյօր:

ԱԶԳ. ՄԵԾ ՀԱՆԴԵՍ Ի ՆՊԱՍՏ

ԱԶԳԱՏԱԽԱՄԻՆ

Վարդանանց տօնին առթիւ «ԲԲՕ-
Շէֆ»ի սրահին մէջ յառաջիկայ մարտ
1ին, հինգշաբթի գիշեր, ժամը 9-ին
տեղի պիտի ունենայ ազգային մեծ
հանդէս մը, յօգուտ Վառնայի Ազգա-
տախնամ րոկերու թիւն եւ
նուազ:

«ՊԱՆԹԱՆ» խոմը պատրաստեալ
է ներկայացնել:

ՄԵԾԸ ՎԱՋԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ողբերգ. 3 արարուած
Եւ ՎԱՐԳԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԷ մէկ տե-
սարան, կան նաեւ մեծաթօսութիւն եւ
նուազ:

Ընկերութիւն Մանսիստմըրի մը մի-
ջոցաւ կարգապահութեան եւ հանգի-
սակարնեբու հանգստութեան համար
ամէն հոգ տարած ըլլալով, կուգայ
ինդըրն համայն ազգայիններէ որ չը
խաշին իրենց ազգայնութիւնը առա-
թիւ ալ ի սէր քաղմաթիւ տառապեալ-
ներու:

Գործ, Ժողով Եղբատ, Բնկ.

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ԹԻՒՐԿԱՐՏ Լ. հատոր (162 էջ) 1 ֆր.
» Բ. » (133 էջ) 2 ֆր.
ՆՈՒ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆԶ
ՀԱՅԿԱԿԷՆ Երկրորդ անգամ տպագ-
րուած եւ ճոխացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ Կը պատկերացնէ Պուլկար-
նեբու նիստ ու կայր ու թուրքերէ
կրած աստապանքը անոնց ազատու-
թենէն առաջ. Գին 50 ամսգին

ՀԱՅԻՆԻՔԻ ՁԱՅԻՐ Պատկեր
մը ճաճահայտաստանի իրական կեան-
քէն: Չեղչեալ գին 1 ֆր.

Սյր գրքերը ստանալու համար զիմն
ՎԱՌՆԱ «Ի րաւ ուն ք» ի խմբագ-
րութեան

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼԸ

Ամերիկայի մէջ «Իրաւունք»ի
գործակալութիւնը ստանձնած է
Տեար Մ. Գ. Սուգիկեան որուն
միջոցաւ եւ կարելի է բաժանոր-
դագրուիլ:

Հասցեն՝

Մ. Գ. ՍՈՒԳԻԿԵԱՆ

18 Տիքս Բլաւ Պոսթօն ԱՄՆ

ՕԹԷԼ ՍԱՄՍՈՆ

ԱՆԵՔՍԱՆՏՐԻԱ

Ճաւի քեպանսի դէն քիւ 18

Ժիար Ս. Շէքերեանի վարչութեան
տակ գտնուող այս ծովեզերեայ եւ
օղակէտ պանդոկը իր մաքրութեամբ
եւ ամեն կատարելութեամբ յանձնա-
րարելի է մէր հայրենակիցներուն: Այ-
ցելուն հոն կը գտնէ նաեւ մաքուր
ճաշարան Գրեկերեան եւ եւրոպական
ճաշակով մաքուր եւ համաթամ կեր-
պուրներով: Գիները չափաւոր են:

Одговор редакторъ А. Курбетиянъ

печаталица Д. Тохоровъ и С-но — Вэриэ

